ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2025 թվականի № 426-Ա

ՄԱՐԻՆԵ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Նոր Հաճընի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2025 թվականի հոկտեմբերի 21-ի № 108 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Նոր Հաճընի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Մարինե Արզումանյանի*** ժամանակավոր անաշխատունակության պատճառով՝ ընկերության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ընկերության առողջության առաջնային պահպանման բաժանմունքի վարիչ ***Մնահիտ Բաղալյանի*** վրա, մինչև տնօրենի աշխատանքի ներկայանալը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և դրա գործողությունը տարածվում է *2025 թվականի հոկտեմբերի 21-ից* ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2025 թվականի հոկտեմբերի 22
ք. Հրազդան